

Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2012 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը

Հաճախակի տրվող հարցեր

Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) գնահատում և դասակարգում է պետությունները/տարածքները՝ ելնելով այն բանից, թե երկրի հանրային ոլորտը (պետական և համայնքային մարմիններ) որքանով է ընկալվում որպես կոռումպացված: Այն բաղադրյալ համաթիվ է, որը ստացվում է իրենց բնագավառներում ճանաչում ունեցող մի շարք կազմակերպությունների կողմից անցկացված հարցումների և գնահատումների՝ կոռուպցիային առնչվող տվյալների համադրությամբ: ԿԸՀ-ն կոռուպցիայի վերաբերյալ աշխարհում ամենից լայնորեն գործածվող ցուցանիշն է:

Ինչո՞ւ է ԿԸՀ-ն հիմնվում միայն ընկալման վրա:

Կոռուպցիան ընդհանրապես իր մեջ ներառում է անօրինական գործունեության տեսակներ, որոնք միտումնավոր թաքցվում են և բացահայտվում են միայն սկանդալների, հետաքննությունների կամ քրեական հետապնդումների միջոցով: Հետևաբար, չկա որևէ հուսալի միջոց՝ փաստական կյուրթի հիման վրա գնահատելու տարբեր պետություններում կամ տարածքներում առկա կոռուպցիայի բացարձակ մակարդակը: Այդ մակարդակը հաշվարկելու հնարավոր փորձերը, ինչպիսիք են, օրինակ, տարբեր միջոցներով վեր հանված կաշառակերության դեպքերի, կոռուպցիայի հետ ուղղակիորեն կապված՝ հարուցված քրեական գործերի կամ էլ դատական գործերի քանակների համեմատության միջոցով ստացված թվերը չեն կարող հանդիսանալ կոռուպցիայի մակարդակի միանշանակ ցուցանիշներ: Դրանք միայն արտացոլում են տվյալ պետության դատախազության, դատական մարմինների եւ/կամ զանգվածային լրատվամիջոցների կողմից կոռուպցիոն հանցագործությունների հետաքննման և վեր հանման արդյունավետությունը: Պետությունների համեմատելի տվյալների հավաքագրման վստահելի մեթոդ է հանդիսանում այն անձանց ընկալումների գրանցումը, որոնք ունակ են փորձագիտական գնահատական տալու տվյալ պետության հանրային ոլորտի կոռումպացվածության վերաբերյալ:

Ո՞ր պետությունները/տարածքներն են ընդգրկված 2012 թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) դասակարգման աղյուսակում և ինչո՞ւ:

Որպեսզի պետությունը/տարածքը ընդգրկվի դասակարգման աղյուսակում, այն պետք է ներառված լինի ԿԸՀ տվյալների առնվազն երեք աղբյուրներում: Հետևաբար, համաթվի աղյուսակում տվյալ

պետության ներառված չլինելը նշանակում է ոչ թե այն, որ այդ պետությունում առկա չէ կոռուպցիա, այլ միայն այն, որ նրա վերաբերյալ առկա չէ կոռուպցիայի վերաբերյալ բավարար տեղեկատվություն:

Որո՞նք են ԿԸՅ հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների աղբյուրները:

2012 թ. ԿԸՅ-ն հիմնված է կառավարման և բիզնես մթնոլորտի վերլուծության հարցերում մասնագիտացած անկախ կազմակերպությունների տվյալների աղբյուրների վրա: 2012 թ. ԿԸՅ-ի համար օգտագործված տեղեկատվության աղբյուրներն այն տվյալներն են, որոնք հավաքվել են անցած 24 ամիսների ընթացքում: ԿԸՅ-ն ներառում է միայն այն աղբյուրները, որոնք դասակարգում են պետությունների/տարածքների խմբերը, և որոնք չափում են հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումը: Թրանսփարենսի հիթերնեշնլը մանրամասն դիտարկել է յուրաքանչյուր տվյալի աղբյուրի մեթոդաբանությունը՝ ապահովելու օգտագործված աղբյուրների համապատասխանությունը Թրանսփարենսի հիթերնեշնլի կողմից պահանջվող որակի չափանիշներին:

Ինչո՞ւմն է ԿԸՅ դասակարգման մեջ պետության/տարածքի զբաղեցրած տեղի և նրա ԿԸՅ արժեքի միջև տարբերությունը:

Պետության/տարածքի ԿԸՅ արժեքը ցույց է տալիս պետության հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալված մակարդակը 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է, որ պետությունն ընկալվում է որպես բացարձակապես կոռումպացված, իսկ 100-ը նշանակում է, որ պետությունն ընկալվում է որպես բացարձակապես մաքուր: Պետության զբաղեցրած տեղը ԿԸՅ դասակարգման աղյուսակում ցույց է տալիս նրա դիրքը դասակարգման մեջ ներառված այլ պետությունների նկատմամբ: Պետության զբաղեցրած տեղը ԿԸՅ դասակարգման աղյուսակում կարող է պարզապես փոփոխվել՝ պայմանավորված այդ աղյուսակում ներառված պետությունների քանակի փոփոխմամբ:

ԿԸՅ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը հանդիսանո՞ւմ է արդյոք աշխարհի ամենակոռումպացված պետությունը:

Ոչ: ԿԸՅ-ն հանրային հատվածի կոռուպցիայի՝ վարչական և քաղաքական կոռուպցիայի ընկալման ցուցանիշ է: Այն չի հանդիսանում մի ողջ պետության կամ հասարակության կոռումպացվածության և այդ պետության արտաքին քաղաքականության կամ գործունեության կամ մասնավոր հատվածի գործունեության վերաբերյալ դատավճիռ: ԿԸՅ դասակարգման ստորին հորիզոնականներում գտնվող պետությունների քաղաքացիները հաճախ նույնքան մտահոգ են և նույնքան քննդատական կոռուպցիայի նկատմամբ, ինչ վերին հորիզոնականներում գտնվող պետությունների/տարածքների հասարակությունները: ԿԸՅ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը այն պետությունը/տարածքն է, որում հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակն ընկալվում է ամենաբարձրը ԿԸՅ աղյուսակում ընդգրկված պետությունների/տարածքների մեջ: ԿԸՅ-ն ոչ մի տեղեկություն չի տալիս այն պետությունների/տարածքների վերաբերյալ, որոնք ընդգրկված չեն այդ համաթվի աղյուսակում:

Ի՞նչ փոփոխություններ են տեղ գտել Կոռուպցիայի ընկալման համաթվի 2012 թ. արժեքում և ինչո՞ւ են այդ փոփոխությունները արվել:

1995 թ. իր առաջին հրապարակումից ի վեր ԿԸՀ-ն համաշխարհային մակարդակով ծառայել է որպես կոռուպցիայի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված հզոր գործիք՝ խթանելով իշխանություններին բարելավելու իրենց երկրների ԿԸՀ հանրային հաստատություններում կոռուպցիայի դեմ պայքարելու միջոցով, հաշվի առնելով կոռուպցիայի հետագա վերլուծություններում ազգային համատեքստը և ապահովելով կարևոր քանակական տեղեկատվություն սույն դժվար չափելի երևույթի վերաբերյալ:

Հաշվի առնելով սույն գործիքի շարունակական կարևորությունը և դրա հանդեպ աճող պահանջարկը՝ 2012 թ. Թրանսփարենսի Ինթերնեշնլը վերանայել է ԿԸՀ հաշվարկի մեթոդաբանությունը: Ըստ Էուբյան, Թրանսփարենսի Ինթերնեշնլը կիրառել է ավելի պարզ մոտեցում, որին հետևելը և հասկանալը ավելի դյուրին է, և որն ավելի լավ է բացահայտում ժամանակի ընթացքում կոռուպցիայի ընկալման փոփոխությունները: Այն այժմ հնարավոր է շնորհիվ տվյալների աղբյուրների ավելի մեծ թվի և որակի, որը վեր է հանում կոռուպցիայի ընկալումը մեծ թվով երկրներում:

ԿԸՀ Նախորդ հրապարակումների մեթոդաբանությունը հիմնված էր տվյալների աղբյուրներում երկրի/տարածքի դիրքի վրա՝ վերհանելով կոռուպցիայի ընկալումը մյուս երկրների/տարածքների համեմատությամբ: 2012 թ. ԿԸՀ-ն օգտվել է յուրաքանչյուր երկրների/տարածքների վերաբերյալ չմշակված արժեքներից և ապա դրանք փոխակերպել է՝ հարմարեցնելով ԿԸՀ սանդղակին: Նոր մեթոդում տեղ գտած փոփոխությունները արտացոլելու նպատակով տվյալների աղբյուրները սանդղակում վերադասակարգելու համար ԿԸՀ-ն ներկայացնող սանդղակը նույնպես փոփոխության է ենթարկվել՝ ընդգրկելով 0-ից 100-ի միջակայքը: Սույն փոփոխված մեթոդով ավելի հեշտ է անդրադառնալ տվյալների աղբյուրների չմշակված արժեքներին: Սա նաև նշանակում է, որ տվյալների արժեքներում տարեցտարի տեղ գտած ցանկացած փոփոխություն տվյալի այդ աղբյուրից ուղղակի կարտացոլվի փոփոխության մեջ վերադասակարգված արժեքում և ազդեցություն չի կրի տվյալների աղբյուրում ներկայացված այլ երկրների/տարածքների արժեքի փոփոխությունից:

2013-ից սկսած որպես սույն վերանայման հետևանք՝ հնարավոր կլինի երկրի մակարդակով ժամանակի ընթացքում արտացոլել փոփոխությունները: Փոփոխված մեթոդաբանությունը նաև յուրաքանչյուր աղբյուրից յուրաքանչյուր երկրի համար օգտագործում է մեկ տարվա տվյալ, որը հնարավորություն է տալիս ժամանակի ընթացքում այն ավելի լավ ընկալել: Նախկինում ԿԸՀ-ն ներառում էր բիզնես հետազոտության նախորդ երկու տարիների տվյալներ:

Արդյո՞ք ԿԸՀ-ն արտացոլում է տվյալ երկրում տիրող կոռուպցիայի ամբողջական պատկերը:

Ոչ: ԿԸՀ-ն սահմանափակված է որոշակի շրջանակով՝ կոռուպցիան ներկայացնելով հանրային հատվածում գործարարների և երկրի փորձագետների տեսանկյունից: Այս մոտեցումը լրացնելու և կոռուպցիայի տարբեր ասպեկտներ ներկայացնելու համար Թրանսփարենսի Ինթերնեշնլի Քարտուղարությունը և աշխարհի ավելի քան 90 երկրներում գտնվող նրա ազգային ներկայացուցչությունների ցանցը իրականացնում են կոռուպցիայի վերաբերյալ որակական և քանակական հետազոտություններ և ուսումնասիրություններ, որոնք տալիս են կոռուպցիայի չափի, տարածվածության և դինամիկայի համապարփակ պատկեր ողջ աշխարհում: Այն նաև ծառայում է փաստերի վրա հիմնված, արդյունավետ քաղաքականության բարեփոխումները համախմբելուն և աջակցելուն:

Բացի Կոռուպցիայի ընկալման համաթվից՝ ԹԻ-ի համաշխարհային հետազոտության փաթեթը ներառում է նաև.

*** Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՅԲ)**

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը աշխարհի ավելի քան 100 պետությունների ավելի քան 100,000 տնային տնտեսությունների ներկայացուցչական հարցման միջոցով չափում է մարդկանց՝ կոռուպցիայի ընկալումն ու փորձը: Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի վերաբերյալ վերջին (2010/2011) տվյալները կարելի գտնել <http://qcb.transparency.org/qcb201011/> հասցեում:

*** Կաշառք վճարողների համաթիվ (ԿՎՅ)**

Կաշառք վճարողների համաթիվը չափում է կոռուպցիայի առաջարկը միջազգային բիզնես գործարքներում: Այն առաջատար արտահանող պետությունների դասակարգումն է՝ հիմնված իրենց ընկերությունների կողմից արտասահմանում պաշտոնյաներին կաշառելու երեւույթի ընկալման հավանականության վրա: Այն հիմնված է գործարար ոլորտի պաշտոնյաների հարցման վրա, և նրա ուշադրության կենտրոնում է արտասահմանյան ընկերությունների գործունեությունը այդ պաշտոնյաների պետություններում: Կաշառք վերցնողների համաթիվի վերաբերյալ վերջին տվյալները կարելի գտնել <http://bpi.transparency.org/bpi2011/> հասցեում:

*** Կոռուպցիայի համաշխարհային զեկույց (ԿՅԶ)**

Կոռուպցիայի համաշխարհային զեկույցը թեմատիկ զեկույց է, որն ուսումնասիրում է կոռուպցիան առանձին ոլորտում կամ հատվածում: Այն հիմնված է փորձագիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների, ինչպես նաև առանձին դեպքերի ուսումնասիրությունների վրա: Կոռուպցիայի համաշխարհային վերջին զեկույցը կարելի է գտնել <http://www.transparency.org/research/qcr> հասցեում:

*** Օրինավորության ազգային համակարգի (ՕԱՅ) գնահատում**

Օրինավորության ազգային համակարգի (ՕԱՅ) գնահատումը տվյալ պետության վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունների շարք է, որը տալիս է այդ պետության արդյունավետ կառավարում և օրինականությունն ապահովող առանցքային հաստատությունների (ի թիվս այլ այլ հաստատությունների՝ նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններ և հակակոռուպցիոն մարմիններ) ուժեղ և թույլ կողմերը: Չեկույցների ողջ ցանկին ծանոթանալու և Օրինավորության ազգային համակարգի մոդելի մասին ավելի շատ տեղեկատվության համար տե՛ս <http://www.transparency.org/whatwedo/nis> հղումը:

*** Թափանցիկությունը կորպորատիվ զեկույցներում (TRAC)**

Սույն ուսումնասիրությունը վերլուծում է, թե աշխարհի ամենամեծ ընկերությունները որքանով են թափանցիկ զեկույցում իրենց կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Հետագա տեղեկությունների համար տե՛ս

http://www.transparency.org/whatwedo/pub/transparency_in_corporate_reporting_assessing_the_worlds_largest_companies